

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ  
ՎԱՆԱԶՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

ԶԵԿՈՒՅՑ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՐՑ ԳՅՈՒՂՈՒՄ

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՊՕՐԻՆԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Զեկույցը պատրաստվել է «Ոստիկանության հետ հարաբերություններում քաղաքացիների իրավունքների պաշտպանության արդյունավետության բարձրացում» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից Նորվեգիայի հելսինկյան կոմիտեի ֆինանսական աջակցությամբ:

Զեկույցում հնչած կարծիքները ՀՔԱ Վանաձորի գրասենյակին են և հնարավոր է չհամապատասխանեն ֆինանսավորող կազմակերպության տեսակետներին:

Զեկույցը կազմեցին՝

Արթուր Սաքունց, Նարե Կոստանդյան, Սառա Ղազարյան

**ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՐՑ ԳՅՈՒՂՈՒՄ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՊՕՐԻՆԻ  
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

ՀՀ կառավարության 2020 թ. ապրիլի 23 -ի N 638 - Լ որոշմամբ հաստատվեց Հայաստանի Հանրապետության ոստիկանության բարեփոխումների ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը<sup>1</sup>: Ռազմավարության թիրախներից մեկը ոստիկանության նոր կերպարի ստեղծումն է՝ «հանցագործությունների նկատմամբ անհանդուրժողական, իրավունքների պաշտպանությանը զգայուն և հասարակության անվտանգության հարցերով մտահոգ, **բարեվարք ու հարգարժան հանրային ծառայող ոստիկաններ**»:

Ռազմավարությունից բխող գործողությունների իրականացմանը զուգահեռ, սակայն, շարունակվում են ոստիկանության աշխատակիցների կողմից բռնությունների, քաղաքացիների արժանապատվությունը նվաստացնելու դեպքերը: Դա են փաստում ինչպես ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերի վերաբերյալ Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի (ՀՔԱՎ) մշտադիտարկումների արդյունքները<sup>2</sup>, այնպես էլ կազմակերպության փաստահավաք աշխատանքները:

Նման փաստահավաք աշխատանքներ կատարվել են 2021 թ. օգոստոսի 18-ին Լոռու մարզի Մարց գյուղում՝ ահազանգի հետքերով:

Մասնավորապես՝ 2021 թ. օգոստոսի 14-ին ոստիկանության ավտոմեքենայի կողմից հետապնդվելու ընթացքում վթարի է ենթարկվել «Ֆորդ» մակնիշի ավտոմեքենան, ինչի հետևանքով երկու անձ մահացել է: Հաջորդ օրը ՀՀ քննչական կոմիտեն հաղորդագրություն է տարածում դեպքի վերաբերյալ, որտեղ նշվում է նաև ոստիկանության ծառայողների նկատմամբ քաղաքացիների կողմից բռնություն կիրառելու և ոստիկանական մեքենաները վնասելու ու հրկիզելու մասին<sup>3</sup>:

**Հաղորդագրությունն ուշագրավ է երկու առումով:** Նախ՝ հրապարակման մեջ նշվում է ոստիկանության ծառայողների նկատմամբ բռնության և այդ դեպքի առթիվ քրեական գործ

---

<sup>1</sup> <https://www.arlis.am/documentview.aspx?docID=141877>  
<sup>2</sup> Տե՛ս, օրինակ, *Տեղեկանք ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտման վերաբերյալ*, 2020 թ., ՀՔԱՎ, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://hcav.am/police-report-2020/>  
<sup>3</sup> Տե՛ս Բռնություն՝ ՀՀ ոստիկանության Թումանյանի բաժնի ծառայողների նկատմամբ. հարուցվել է քրեական գործ. չորս անձ ձերբակալվել է (տեսանյութ, լուսանկարներ)  
<https://www.investigative.am/news/view/vostikanneri-nkatmamb-brnutyun-lori-tumanyan.html>

հարուցելու մասին, սակայն անդրադարձ չի կատարվում ոստիկանության ծառայողների ապօրինություններին և բռնություններին, որոնց մասին ՀՔԱՎ ահազանգել է մի քանի քաղաքացի: Բացի դրանից՝ անհետաձգելի և մեծածավալ քննչական և դատավարական այլ գործողությունների ու միջոցառումների արդյունքում հնարավոր է եղել պարզել **ոստիկանության ծառայողների նկատմամբ բռնություն կիրառած անձանցից չորսի ինքնությունը, ձերբակալել նրանց, սակայն չի հաջողվել պարզել տուժած երրորդ անձի ինքնությունը, որը չէր մահացել:**

Ինչ վերաբերում է դեպքին հաջորդած՝ ոստիկանության ծառայողների գործողություններին, համաձայն բնակիչների՝ միջադեպի մասնակիցների ինքնությունը պարզելու ոստիկանության և քննչական կոմիտեի «միջոցառումներն» ուղեկցվել են բռնությամբ, արժանապատվության նվաստացմամբ, անարգանքով: Դրանց հետևանքով խաթարվել է Մարց գյուղի բնականոն կյանքը, բնակիչներն ահաբեկված են, ոստիկանության բաժանմունք բերման ենթարկվածները հոգեկան ծանր վիճակում են, խուսափում են բաժանմունքում իրենց նկատմամբ բռնությունների, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի մասին բարձրաձայնելուց՝ վախենալով, որ իրենց և իրենց հարազատներին կրկին բռնության կենթարկեն:

Ոստիկանության ծառայողները գիշերով զինված և դիմակավորված ներխուժել են բնակիչների տներ, այդ թվում ննջասենյակներ, անչափահաս երեխաների աչքի առաջ բռնություն են կիրառել, ահաբեկել անձանց: Անհասկանալի է, թե ինչպես է գնահատվել գիշերվա ընթացքում նման գործողությունների անհրաժեշտությունն ու համաչափությունը: Հիշեցնենք, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով հստակ սահմանված են քննչական գործողությունների կատարման կարգը, մինչդեռ ոստիկանության գործողություններն ուղեկցվել են օրենսգրքի բազմաթիվ կոպիտ խախտումներով: Մասնավորապես՝ ըստ օրենսգրքի

- բերման ենթարկելը կատարվում է վարույթն իրականացնող հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի կամ դատարանի պատճառաբանված որոշման հիման վրա: Նշանակված ժամկետում կանչով ներկայանալուն խոչընդոտող հարգելի պատճառների առկայության մասին կասկածյալը, մեղադրյալը, ամբաստանյալը, դատապարտյալը, ինչպես նաև վկան և տուժողը պարտավոր են տեղյակ պահել իրենց կանչած մարմնին (հոդ. 153, կետ 2)

Մարց գյուղում, տարբեր տվյալներով, բերման է ենթարկվել 20-30 հոգի: Բերման են ենթարկվել ոչ միայն դեպքի վայրում գտնված անձինք, այլ նաև նրանց հարազատները, բարեկամները: Ընդ որում՝ որևէ որոշում/ծանուցում, բերման ենթարկելու հիմքերի, անձի կարգավիճակի վերաբերյալ որևէ տեղեկություն որևէ մեկին չի ներկայացվել: Ավելին՝ նույն

անձը բերման է ենթարկվել 2-3 անգամ, ինչը վախի և լարվածության մթնոլորտ է ստեղծել բնակիչների մոտ: Ումանք վախենում են տանից դուրս գալ, մյուսները՝ տանը գիշերելուց:

→ **քննչական գործողություններ իրականացնելիս անթույլատրելի են նախնական քննության մասնակիցների նկատմամբ բռնության, սպառնալիքի և անօրինական այլ գործողությունների գործադրումը, ինչպես նաև նրանց կյանքի և առողջության համար վտանգավոր պայմանների ստեղծումը (հոդ. 188<sup>1</sup>, կետ 2)**

1. համաձայն ձեռք բերված տեղեկության՝ Մարց գյուղում ոստիկանության ծառայողները օգոստոսի 14-ի լույս 15-ի գիշերը դիմակավորված և զինված ներխուժել են բնակիչների տներ, ննջասենյակներ, առանց ներկայանալու, բռնություն կիրառելով բերման են ենթարկել անձանց
2. երրորդ տուժողին հիվանդանոցից տուն վերադառնալուց կես ժամ հետո տասից ավել զինված ոստիկաններ զենքով հրելով բերման են ենթարկել, թույլ չեն տվել վնասվածքներ ունեցող բերման ենթարկվող տղամարդու կնոջն ու որդուն օգնել նրան հագնվել՝ պահանջելով նրանցից մտնել սենյակ ու դուռը փակել
3. բերման ենթարկված երիտասարդներից մեկի ծնողին նստեցրել են ոստիկանական մեքենան՝ սպառնացել, որ մինչև որդին դուրս չգա տանից, իրեն բաց չեն թողնի
4. անձանց բաժանմունքում պահել են 13-16 ժամ. բերման ենթարկվածներից առնվազն մեկի՝ բաժանմունքից դուրս գալուց հետո առողջական վիճակը վատացել է, և նրան տեղափոխել են հոսպիտալ

→ **արգելվում է կասկածյալից, մեղադրյալից, ամբաստանյալից, տուժողից, վկայից և քրեական դատավարությանը մասնակցող այլ անձանցից ցուցմունքներ կորզել բռնության, սպառնալիքի, խաբեության, նրանց իրավունքների ոտնահարման, ինչպես նաև այլ անօրինական գործողությունների միջոցով**

1. ցուցմունք կորզելու նպատակով ոստիկանության ծառայողները բաժանմունքում 8-9 հոգով պարբերաբար բռնության են ենթարկել ու նվաստացրել բերման ենթարկվածներին, այդ թվում՝ առողջական խնդիրներ ունեցող երիտասարդի: Հարվածներ են հասցրել նրանց գլխին, կոկորդին, դեմքին, հարկադրել են ձեռքերը վերև պահած կանգնել՝ երկար ժամանակ չթույլատրելով նստել:
2. ցուցմունք կորզելու նպատակով անձանց նկատմամբ նաև հոգեբանական ճնշում են գործադրել՝ ահաբեկում էին («քո դեմքը տեսել են», «քո դեմ ցուցմունք են տալիս»), սպառնում («ծնողներիդ բերման ենք ենթարկելու, եթե չխոստովանես»), ուղղորդող հարցեր տալիս («ինչպե՞ս եք ծեծել ոստիկաններին», «ինչպե՞ս եք մեքենան այրել»), հայիոյանքներ են հնչեցնում նրանց հասցեին:

→ հանցանք կատարելու մեջ կասկածվող անձին հետաքննության մարմին, քննիչի կամ դատախազի մոտ բերելուց հետո՝ երեք ժամվա ընթացքում, կազմվում է կասկածյալին ձերբակալելու մասին արձանագրություն, որի պատճենը ստորագրությամբ տրվում է ձերբակալված անձին (հոդ. 131<sup>1</sup>, կետ 1)

Առնվազն մեկ դեպքում անձը գտնվել է բաժնում 14 ժամից ավել, ենթարկվել է բռնության, արժանապատվության նվաստացման, հոգեբանական ճնշման, նրան չեն ձերբակալել, իսկ բաժանմունքից դուրս գալիս որևէ փաստաթուղթ/արձանագրություն անձը չի ստորագրել: Այսինքն նրա՝ բաժնում գտնվելու փաստը որևէ կերպ չի արձանագրվել:

→ գործի համար նշանակություն ունեցող առարկաներն անհրաժեշտության դեպքում պետք է առգրավվեն ընթերակաների մասնակցությամբ (հոդ. 227, կետ 1), դատարանի որոշման հիման վրա, որին ծանոթացվում է անձը և այդ մասին նրանից վերցվում է ստորագրություն (հոդ. 227, կետ 1 և 2):

Ոստիկանության ծառայողները, առանց սահմանված ընթացակարգերի պահպանման, վերցրել են բերման ենթարկվածներից մեկի կնոջ բջջային հեռախոսը՝ առանց վերջինիս իմացության, ինչը հավասարագոր է առևանգման:

Ոստիկանության ծառայողները նաև չեն ապահովել պատշաճ բժշկական օգնություն տուժածներին: Ավելին՝ նրանք **խոչընդոտել են Մարց գյուղի բնակիչների՝ այն ստանալու իրավունքը**: Մասնավորապես՝ Ալավերդու շտապ օգնության մեքենան դեպքի վայր է ժամանել միայն 1,5 ժամ անց, այն դեպքում, երբ սովորաբար հասնում է 40 րոպեում: Բացի դրանից՝ մահացածներից մեկի հուղարկավորության օրը հարազատների կանչը չի գրանցվել Ալավերդու շտապ բժշկական օգնություն կայանում, նրանց պատասխանել են, որ «միլիցեքը չեն թողնում գանք», «գանգեք ոստիկանություն, որ թույլ տան գանք»:

Անհրաժեշտ հարգանք չի դրսևորվել անձանց կորստին ու վշտին: Մահացած երիտասարդներից մեկի հուղարկավորության օրը ոստիկանության ծառայողները նույնպես ներկա էին և նույնիսկ հարկ չեն համարել ցավակցական խոսքեր ուղղել հարազատներին, իսկ այգալացի օրը (ինքնահող) ոստիկանության ծառայողները բերման են ենթարկել տուժողներից մեկի եղբորը:

Մարց գյուղում ՀՔԱՎ աշխատակիցներն արձանագրել են, որ բնակիչներն ահաբեկված են, տիրում է վախի մթնոլորտ, ոստիկանների կողմից կատարված ապօրինությունները խեղաթյուրել են ոստիկանի կերպարը բնակիչների մոտ, որը պետք է ընկալվեր որպես իրավունքի պաշտպանություն, ապօրինություններ կանխող: Մի քանիսի վկայությամբ ոստիկանության մեքենան գյուղի մեջ այնքան արագ է ընթացել, որ նույնիսկ երեխայի է

վրաերթի ենթարկելիս եղել, երեխաներից մի քանիսը վախից ջերմություն են ունեցել, հաց չեն կերել.

*«Երեխաները շոկի մեջ, 2 օր հաց չեն կերել, չեն կարողացել խոսել: Հենց շոկը անցնում է, ուզում ենք երեխաներին մի քիչ կյանք վերադարձնել, նորից են գալիս»:*

Բերման ենթարկվածները գտնվում են հոգեբանական ծանր վիճակում, որն առաջացել է մահացածների մարմինները տեսնելուց, ոմանք իրենց մտերիմ ընկերների հուղարկավորությանը չեն մասնակցել՝ միջադեպի ժամանակ իրենց տեսածը վերհիշելու և ոստիկանության հետապնդումներից վախի պատճառով: Շատերը խուճապահար լքել են գյուղը, հատկապես այն ընտանիքները, որոնք արու գավակ ունեն.

*«Հիմա սաղ գյուղը ման արի մի տղամարդ չես տենա, բոլորը փախած են. գալիս են տանում ջարդում... ջարդել որ ասում ենք, դա դեռ մեղմ ենք ասում»:*

Առհասարակ տպավորություն է, որ ոստիկանությունն առաջնային նպատակը բնակիչներին ահաբեկելն էր, այլ ոչ թե դեպքի հանգամանքները պարզելը և մեղավորներին պատասխանատվության կանչելը: Օրինակ՝ համաձայն բնակիչներից մեկի խոսքերի՝ օգոստոսի 16-ի լույս 17-ի գիշերը չորս ոստիկաններ «դուռ ջարդելով և բարձր բղավոցներով մտել են տուն»՝ որդուն տանելու, որդին տանը չի լինում, և լսում է, թե ինչպես է ոստիկանը ինչ-որ մեկի հետ խոսելիս ասում. «հորը որ ի՞նչ բերես»: Թե ինչ «հրահանգի» պատասխան կարող է լինել այս մեջբերումը, կարելի է ենթադրել նախորդող դեպքերի և խոսակցության համատեքստից:

Բերման են ենթարկել նույնիսկ նրանց, ովքեր օգնություն են ցուցաբերել կամ պարզապես գտնվել են դեպքի վայրում՝ չունենալով որևէ մասնակցություն և ոչ միայն Մարց, այլ նաև Լորուտ և Ահնիձոր գյուղերից:

*«Անգամ ուրիշ տեղից՝ Լորուտից, Ահնիձորից, մարդ է եղել, անունը ճշտել են իրենց կապերով, գնացել են իրենց տնից տարել, մինչև մահվան դուռ ծեծել, հետո իմացել, որ սխալ մարդու են տարել»:*

Հատկանշական է, որ իրավասու մարմինների կողմից հիշատակվող՝ ոստիկանության ծառայողական «Վագ 2106» մակնիշի հրկիզված ավտոմեքենան չունի պետական հաշվառման համարներ<sup>4</sup>:



Աղբյուրը՝ [www.shamshyan.com](http://www.shamshyan.com)

Այսպիսով՝ «Ֆորդ» մակնիշի ավտոմեքենայի վթարի ենթարկվելու դեպքի և դրան հաջորդած ոստիկանության գործողությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ

- ոստիկանության ծառայողներն անհրաժեշտ մասնագիտական հմտություններ չեն դրսևորել՝ ճիշտ գնահատելու հետապնդման հնարավոր հետևանքները և արդարացվածության աստիճանը՝ ստեղծելով վթարային իրավիճակներ ու վտանգ ներկայացնելով նաև գյուղի երեխաների կյանքի համար;
- ոստիկանության ծառայողներն անհրաժեշտ մասնագիտական հմտություններ չեն դրսևորել հուզական լարված վիճակում գտնվող անձանց հետ աշխատանքում;
- ոչ միայն չի ապահովվել անձանց բժշկական օգնություն ստանալու իրավունքը, այլև խոչընդոտվել է;
- հետաքննության մարմինների գործողություններն ու միջոցառումներն ուղեկցվել են ՀՀ օրենսդրության կոպիտ խախտումներով;
- ոստիկանության ծառայողների կողմից առևանգվել են բնակիչների իրերը;
- ոստիկանության բաժանմունքում անձինք ենթարկվել են խոշտանգման, նրանց նկատմամբ կիրառվել է բռնություն, հոգեբանական ճնշում, նրանց սպառնացել են, ահաբեկել, նրանց հասցեին հայհոյանքներ են հնչեցրել՝ ցուցմունք կորզելու համար;
- խաթարվել է Մարց գյուղի բնականոն կյանքը. բնակիչները, այդ թվում՝ անչափահաս երեխաները, գտնվում են հոգեկան ծանր վիճակում, ապրում են վախի ու անորոշության մթնոլորտում, վախենում են բարձրաձայնել «իրավապահ մարմինների» կողմից իրենց նկատմամբ իրականացված ապօրինի գործողությունների մասին:

**Կոչ ենք անում դադարեցնել ՀՀ քաղաքացիների նկատմամբ ապօրինի գործողությունները, ահաբեկումները, անհապաղ քրեական գործեր հարուցել բռնություն գործադրած ծառայողների**

<sup>4</sup> <https://m.shamshyan.com/hy/article/2021/08/15/1193758/>



նկատմամբ, հարգել անձանց արժանապատվությունը և գործել բացառապես օրենքի շրջանակում, միջոցներ ձեռնարկել վերականգնելու Մարց գյուղի բնակիչների հոգեկան հավասարակշռությունը, ըստ անհրաժեշտության ապահովել հոգեբանական աջակցություն անչափահաս երեխաներին, ոստիկանության ապօրինի գործողություններից անմիջականորեն տուժած անձանց և նրանց հարազատներին, ապահովել միջավայր և պայմաններ իրենց նկատմամբ ապօրինությունների և բռնությունների վերաբերյալ առանց վախի բողոքներ, դիմումներ, վկայություններ տալու՝ քաղաքացիների իրավունքի իրացման համար: